ՀՀ Առողջապահության նախարարության
<Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն> ՊՈԱԿ-ի տնօրեն

Արմեն Հայրապետյան ______________

# ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՏԱԿ-ՇՀԾՁԲ-14/20>>

ք. Երևան <<___>> ___________ 2014 թ.

ՀՀ ԱՆ <<Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն>> ՊՈԱԿ, ի դեմս տնօրեն Արմեն Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ------------------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ------------------------ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բժշկական սարքերի և սարքավորումներ սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմաննագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 **ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի միջոցով ազատել սույն գործարքի հասույթն ԱԱՀ-ից:**

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ______ (___տառերով___________________________) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ______ (___տառերով___________________________) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 31-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն

ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ<br>«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ<br>Մարգարյան 6/2 հասցեով<br>ՀՎՀՀ 01243384<br>Հայէկոնոմբանկ Ճ/մ<br>Հ/Հ 163028018899<br>____________________<br>/ստորագրություն/ | ____________________<br>/ստորագրություն/ |

*Հավելված 1*

*<<___>>________ 20 թ. կնքված N ՏԱԿ-ՇՀԾՁԲ-14/20*
*ծածկագրով գնման պայմանագրի*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր |
|---|
| **Չափաբաժին 1 (Առաջին)**<br>Տեխնիկական բնութագիր<br><br>«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ազգային ռեֆերենս լաբորատորիայի, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքային հակատուբերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ-ի լաբորատորիայի, «Թիվ 19 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի լաբորատորիայի, «Արշակունյանց պոլիկլինիկա» ՓԲԸ-ի լաբորատորիայի կենսանվտանգության 2-րդ դասի քարշիչ պահարանների զտիչների փոխարինման և սպասարկման<br><br>Կամակերպությունը/մասնագետը պետք է մատուցի հետևյալ ծառայությունները՝<br><br>1.) Կենսանվտանգության 2-րդ դասի զտիչով AURA Mac 2000 /թվով 2 հատ/, JOUAN MSC 12 /թվով 1 հատ/, MSC6 /թվով 2 հատ/, BIOBASE - BYKG/թվով 1 հատ/ և Thermo scientific class II BSC մոդելով կենսանվտանգության քարշիչ պահարանների զտիչների տեխնիկական սպասարկում, կարիքի դեպքում փոխարինում:<br><br>2.) Իրականացնել կենսանվտանգության 2-րդ դասի պահարանների չափումներ (ծառայությունը պետք է ներառի անհրաժեշտ գործիքներն ու սարքավորումները) և սերտիֆիկացում, որը կիրականացվի միջազգային ակրեդիտացված կազմակերպության/ինժեների կողմից:Աշխատանքի ավարտից հետո կենսանվտանգության քարշիչ պահարանի որակի գնահատման արձանագրության տրամադրում:<br><br>3.) Գործընթացը պետք է իրականացվի համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հաստատված ուղեցույցների՝ ապահովելով լաբորատոր անձնակազմի անվտանգությունը:<br><br>4.) Լաբորատոր անձնակազմի համար կազմակերպել կենսանվտանգության 2-րդ դասի քարշիչ պահարանների չափումներ, այդ նպատակով կիրառվող բոլոր |

սարքավորումների օգտագործման և սպասարկման վերաբերյալ:

5.) Զտիչների փոխարինումից հետո քարշիչ պահարանները պետք է թեսթավորվեն և փաստագրվեն:

## Չափաբաժին 2 (Երկրորդ)

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. MGIT սարքավորման պահպանում և հիմնանորոգում

BACTEC MGIT 960 ավտոմատ համակարգի պահպանում և նորոգում

BACTEC MGIT 960 ավտոմատ համակարգը նախատեսված է փորձանոթում/in vitro կլինիկական նմուշներից տուբերկուլոզային միկոբակտերիայի ախտորոշման համար / բացառությամբ մեզ և արյուն /: Նմուշները հավաքվում, մշակվում և ինոկուլացվում են հատուկ BBL MGIT 7 մլ ծավալ ունեցող փորձանոթներում:
Համակարգը բաղկացած է 3 աշխատանքային սեկցիաներից /յուրաքանչյուր աշխատանքային սեկցիա ներառում է 320 BBL MGIT փորձանոթներ /, որտեղ իրականացվում է ինկուբացիա: Համակարգի հնարավորությունը կազմում է շաբաթական 154 փորձանոթ հետազոտության 6 շաբաթվա պրոտոկոլով / կամ էլ 115 փորձանոթ հետազոտության 6 շաբաթվա պրոտոկոլով: Քանի որ միկոբակտերիայի աճի արագությունը այս համակարգով բավականին բարձր է, նշված ծավալը թույլ է տալիս հետազոտելու ախտորոշվող նմուշի 8000 օրինակ՝ տարվա ընթացքում :
Հիմնական առավելությունը BACTEC MGIT 960 համակարգի հանդիսանում է

- Ավտոմատ նմուշների անընդհատ թեստավորումը ոչ ինվազիվ և ռադիոմետրիկ տեխնոլոգիաների կիրառմամբ
- Լաբորանտի մինիմալ մասնակցությունը համակարգի կառավարման գործընթացում
- Դրական կուլտուրայի հայտնաբերումը ազդանշվում է լուսային ինդիկատրով, հեղուկ կրիստալիկ դիսփլեյով և ձայնային ազդանշանով
- Փորձանոթները պլաստիկ են և կայուն վնասման նկատմամբ

BACTEC MGIT 960 ավտոմատ համակարգը միաժամանակ կատարում է BBL MGIT 7 մլ 960 փորձանոթների թեստավորում միջավայրում միկոբակտերիայի առկայության դեպքում: Համակարգը իրենից ներկայացնում է մոդուլ կոնստրուկցիա, որտեղ ղեկավարող էլեկտրոնիկան գտնվում է վերին սեկցիայում, նմուշների թեստավորման 3 սեկցիաները և ինկուբացիայի վերահսկման համակարգերը, սնուցման բլոկը և ինկուբացիայի վերահսկումը գտնվում են ստորին մասում:
Յուրաքանչյուր կայան պարունակում է չափիչ մոդուլ՝ բաղկացած է հետևյալ կոմպոնենտներից՝
-Փորձանոթների պահիչ՝ փոսիկներով / աշխատանքային կայան /
-Ալեհավաք - փորձանոթների թեստավորումը տեղի է ունենում ալեհավաքի շարժման

ընթացքում, որը գտնվում է աշխատանքային կայանների ներքո: Սարքը պարունակում է 16 ալեհավաք / աշխատանքային կայանում ամեն մի շարքում մեկական/:

- Տեղամասի վիճակի ինդիկատորներ ամեն աշխատանքային կայանի հետին պանելում գտնվում են 3 ինդիկատորներ:Առաջինը միանում է, երբ աշխատանքային կայանում հայտնվում է դրական պատասխան, երկրորդը՝ միանում է բացասական փորձանոթների համար պրոտոկոլն ավարտելու դեպքում, երրորդը միանում է ինչ-որ սխալի առաջացման դեպքում՝ ամեն մի ցանցի սեկցիայի աշխատանքի ժամանակ

- Տեղամասի վիճակի լուսային դիոդներ տեղակայված են ամեն մի կայանում: Գույնը /կարմիր, կանաչ, օրանժ/ և իրավիճակը / միացված, անջատված/ ցույց է տալի կայանի վիճակը / ինչպիսիք են՝ դրական, բացասական,սխալ /

-Բար-Կոդ սկաներ համակարգի առջևի պանելում է գտնվում և նախատեսված է փորձանոթների շտրիխ կոդերի տպման՝ նրա իդենտիֆիկացիայի համար: Սկաները միացվում է ավտոմատ երբ համակարգը պատրաստ է հաշվելու շտրիխ կոդը:

-Ֆլոպի սկավառակ- ապահովում է ծրագրային ապահովման հնարավորության թարմացումը՝ տվյալների պահպանման համակարգի ախտորոշման և սխալների կորեկցիայի համար

-Հեղուկ բյուրեղային դիսպլեյ և ստեղնաշար – համակարգի իրավիճակի և ստեղնաշարի ինֆորմացիան է ցույց տալիս, որը հնարավորություն է տալիս կատարելու համակարգային միջամտություններ: Ստեղնաշարը թույլ է տալիս շահագործողին կատարել այնպիսի միջամտություններ՝ ինչպես մտցնել և հեռացնել փորձանոթները, հաստատվող պարամետրերի հարմարեցում և այլն: Երեք սեղմանկաները ունեն ֆիքսվող ֆունկցիաներ անկախ դիսփլեյի ընթացիկ կարգավիճակից կամ միջամտություններից: Մնացած 8 ստեղնաշարերը հանդիսանում են ծրագրային ապահովման սեղմնակներ, որոնց ֆունկցիաները կախված են դիսփլեյի ընթացիկ կարգավիճակից: Ամեն դիսփլեյ իր ստորին մասում արտացոլում է իկոնկա, որը ընթացիկ ֆունկցիա կատարող իմաստ է արտահայտում:

-Համակարգիչ – սիստեմային համակարգիչը գտնվում է համակարգի վերին կայանում և նախատեսված է դրական փորձանոթների, համակարգի վերահսկման, տվյալների պահպանման համար

- Արտաքին կայան- Համակարգի հետին պանելի արտաքին կայանը կիրառվում է պրինտերի հետ միացման համար: Մնացած կայանները նախատեսված են սպասարկման այլ նպատակների համար: Ցանցային կայանը անհրաժեշտ է այլ սարքերի հետ միացման համար

-Ծրագրային ապահովում- համակարգային ծրագրային ապահովումը ներկայացված է օգտվողի համար հեշտացված ձևով իկոնաներով, արտացոլում է բոլոր ֆունկցիաները, միջամտությունները, տեղակայված պարամետրերը և կարգավիճակը

- Հիմնական ստատուս էկրան- էկրանը հայտնվում է համակարգի բոլոր փակ կայանների դեպքում: Գումարային մասը ցույց է տալիս դրական, բացասական,թեստավորվող, հասանելի, ինչպես նաև անանուն կայանների, սխալներով կայանների և ընթացիկ ամսաթիվը և ժամը: Ֆունկցիոնալ ստեղնաշարերը թույլ են տալիս կատարելու պարամետրերի հաստատում, կատարելու ամենօրյա սպասարկում, դիտելու համակարգային սխալները, ստանալու հաշվետվությունները և ստուգել սարքի ջերմաստիճանը:

- Կոնֆիգուրացիայի/մատակարարման /էկրաններ – թույլ էտալիս հաստատել պրոտոկոլի շարունակությունը, ժամը, ամսաթիվը և նրանց ֆորմատը,վթարային ազդանշանի ձայնի բարձրությունը, սարքի իդենտիֆիկացիոն համարը, հաշվետվությունների համար լեզվի ընտրությունը, կատարել ստուգում բոլոր ինդիկատրային լամպերի, ձայնագրել տվյալները ֆլոպի սկավառակի վրա և թարմացնել ծրագրային ապահովումը:

-Ակտիվ էկրաններ - Այս էկրանը հայտնվում է համակարգի ինչ-որ կայանի բացելու դեպքում, և թույլ է տալիս մտցնել նոր փորձանոթներ, հանել դրականները, բացասականները, թեստավորվող փորձանոթները, իդենտիֆիկացնել անանուն փորձանոթները և որոշել կայանի սխալները:

- Ներկառուցվածքային թեստավորում- Սարքի ծրագրային ապահովումը ստեղծված է այն ձևով, որպեսզի անընդհատ էլեկտրական օպտիկ աշխատանքը բոլոր ալեհավաքները միասին կցված: Տվյալ ֆունկցիան կոչվում է BIT / Ներկառուցվածքային թեստավորում / և թույլ է տալիս կատարել ավտոմատ մոնիթորինգ ամեն ժամ ամեն ալեհավաքի հիմնական միջամտությունների բնութագրի: Տվյալ թեստը վերահսկում է, թե որ հիմնական ազդանշանն է յուրաքանչյուր ալեհավաքին ենթարկվում՝ հաստատված միջանկյալ ժամանակամիջոցում:

**Տեխնիկական բնութագիր:**

| | |
|---|---|
| Նմուշների քանակը | 960<br>ամեն ինկուբացիոն բլոկում 320 փորձանոթ |
| Էկրան | Սենսորային |
| շտրիխ-կոդ | ներկառուցված |
| Փորձանոթների բաղադրությունը | հեղուկ հարստացված սննդային միջավայր Middlebrook 7H9 |
| հարստացնող հավելումներ | - OADC: օլեինաթթու,շիճուկային սպիտակուց, դեքստրոզա, կատալազա<br>- հակաբիոտիկներ PANTA (5) գրամ(-), գրամ (+), անաէրոբ ֆլորայի և սնկերի ճնշման համար: պոլիմիքսին B, ամֆոտերիցին B, նալիդիքսաթթու,տրիմեթոպրիմ,ազլոցիլին) |
| Տեխնոլոգիա | ֆլուորոսցենցիա (թթվածնի որոշում) |

| | |
|---|---|
| Նշանակությունը | Տուբերկուլոզի հարուցչի իդենտիֆիկացիա և ԴԶԹ |
| Նմուշները | խորխ<br>լվացող հեղուկներ<br>ողնուղեղային հեղուկ |
| ախտորոշվող նմուշից տուբերկուլոզային միկոբակտերիայի որոշումը, օր, | 10 - 20 |
| դեղազգայունության որոշման ժամկետները, օր, | 5 - 14 |
| ծրագրային ապահովում | տվյալների բազայի ստեղծման համար անհրաժեշտ է ունենալ EpiCenter ծրագիր և միացնել սարքը համակարգչային ցանցին |
| Որակի վերահսկում | ներկառուցված |
| հակաբիոտիկներ | SIRE հավաքածու (ստրեպտոմիցին, իզոնիազիդ,, ռիֆամպիցին, էթամբութոլ), ինչպես նաև առանձին ֆլակոններ հակաբիոտիկների բարձր կոնցենտրացիաներով(ստրեպտոմիցին 4,0, իզոնիազիդ 0,4, էթամբութոլ 7,5) |
| չափսերը, մմ | 920 x 1350 x 850 |
| Մինիմալ ազատ տարածությունը | 0,2 սմ ձախից, աջից և սարքի հետի պատերից, 121,9 սմ սարքի առջևի պատից |
| Քաշը | 360,2 կգ (փորձանոթներով) |
| Էլեկտրական ցանցի պահանջը | |
| Ներս մտնող լարվածությունը | 95 – 130Վ կամ 180 – 264Վ |
| Հոսանքի ուժը | 10Ա մաքսիմում |

| | |
|---|---|
| | (ինստալացիայի դեպքում 15Ա) |
| | ինստալացիայի դեպքում 15Ա) |
| հաճախականությունը | 50 կամ 60 Հց+ 3 ՀՑ |
| Հզորությունը | 1կՎտ |
| Պահանջը շրջակա միջավայրի նկատմամբ | |
| Սարքի պահպանումը | |
| Ջերմաստիճանը | -17.8°C - 65°C |
| Խոնավությունը | 30% - 80% |
| Սարքի շահագործումը | |
| Ջերմաստիճանը | 19°C – 30°C<br>Շրջակա միջավայրի բարձր լինելու դեպքում՝ 32°C միկրոօրգանիզմների աճը կարող է խանգարվել |
| Խոնավությունը | 30% - 80% |
| Սարքի շահագործումը | |
| Ջերմաստիճանը | 19°C – 30°C<br>Շրջակա միջավայրի բարձր լինելու դեպքում՝ 32°C միկրոօրգանիզմների աճը կարող է խանգարվել |
| Խոնավությունը | 30% - 80% |
| Տեղադրվածությունը | դեմքի մակարդակով, առանց տաքացման և արևի ուղիղ ճառագայթներից հեռու |
| բարձրությունը ծովի մակարդակից | 0 – 3048 մ |

BACTEC MGIT 960 սարքի շահագործման ընթացքում կարող են առաջանալ մի շարք խնդիրներ, որոնց դեպքում հարկ է բոլոր տվյալները ձայնագրել սկավառակի վրա և դիմել Becton Dickinson կազմակերպության ներկայացուցչին: Պետք է իրականացնել

| |
|---|
| սպասարկող անձնակազմի դասընթացների կազմակերպում ուղղված համակարգի շահագործման և աշխատելու ընթացքում ծագած խնդիրների շտկմանը :<br>Շահագործման ընթացքում առաջացած խնդիրներ<br>Սարքի շահագործման ընթացքում առաջացած խնդիրներ, որոնք պետք է տրամադրվեն ընկերության կողմից.<br>1.Անսահմանափակ հեռախոսային խորհրդատվություն և օգնություն.<br>• Տեխնիկական և ինֆորմացիոն ծառայություն - տեխնիկական օգնություն օպերատորական հարցերի և խնդիրների դեպքում,<br>• Ծառայության թեժ գիծ – անսարքությունների և վերանորոգման օգնություն,<br>2. Ինժեների այցելություններ.<br>• Ինժեները պետք է կատարի ամենամյա մեկ պրոֆիլակտիկ ինսպեկտորական այցելություն համոզվելու համար, թե արդյոք սարքի աշխատանքը համապատասխանում է արտադրողի պահանջներին,<br>• Տարին 2 անգամյա /շտապ / ինժեների այցելություններ ՝ սարքի անսարքությունների ախտորոշման և վերանորոգման համար,<br>3. Վերանորոգման ընթացքում անհրաժեշտ բոլոր պահեստամասերը պետք է ներառված լինեն սպասարկման արժեքում (բացառապես սարքին վերաբերվող պահեստամասերի),<br>4. Ծրագրային ապահովման և թարմացումների հետ կապված խնդիրները պետք է ներառված լինեն սպասարկման արժեքում, բացառությամբ եթե թարմացումները ուղղված չեն համակարգի հզորությունների ավելացմանը,<br>4. Ինժեների այցելության ընթացքում սպասարկվող անձնակազմի համար դասընթացների կազմակերպում՝ ուղղված համակարգի շահագործման և աշխատելու ընթացքում ծագած խնդիրենրի շտկմանը, |

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | ավարտը |
| 7 Օգոստոս 2014թ. | 31.դեկտեմբեր 2014թ. |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ԱՆ
«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Մարգարյան 6/2 հասցեով
ՀՎՀՀ 01243384
Հայէկոնոմբանկ Շ/մ
Հ/Հ 163028018899

______________________________

/ստորագրություն/

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

______________________________

/ստորագրություն/

*Հավելված 2*
*<<_____>> ________________ 20 թ. կնքված*
*N ՏԱԿ-ՇՀԾՁԲ-14/20 ծածկագրով գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում արտաբյուջետային միջոցներով | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Բժշկական սարքերի և սարքավորումների սպասարկում | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ..... % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | **100%** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Մարգարյան 6/2 հասցեով
ՀՎՀՀ 01243384
Հայէկոնոմբանկ Շ/մ
Հ/Հ 163028018899

____________________________
/ստորագրություն/

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-\-
(ստորագրություն)

*Հավելված 3*
*<<____>> ________________20 թ. կնքված N ՏԱԿ-ՇՀԾՁԲ-14/20*
*ծածկագրով գնման պայմանագրի*

Կատարող

________________________________
________________________________
________________________________
________________________________
գտնվելու վայրը ____________
____________
հհ ______________________
հհ________________________
________________________________
________________________________
հվհհ ______________________
հվհհ________________________

Պատվիրատու

գտնվելու վայրը

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<________________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ________________________________________________
________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<________________>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ________________________________________ և
Կատարողը՝ ի դեմս________________________________________________,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 20___թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________________

ստորագրություն

______________________________

Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________________

ստորագրություն

______________________________

Ազգանուն, Անուն

Կ.Տ.

| Ընդամենը | | | | | |
|---|---|---|---|---|---|

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

________________________

ստորագրություն

ստորագրություն

________________________

Ազգանուն,

Անուն

Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Կ.Տ.